ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018 թ. ապրիլի 18 N 38

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<թ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N 136-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետի պահանջները և <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 17-ի N 3 որոշումը և Ա. Հակոբյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

2018 թվականի ապրիլի 18-ից Արմեն Հակոբյանին ազատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից և նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

Աշխատավարձը՝ <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակով սահմանված կարգով:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ